

**ՀՄԱՅՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԳՈՒՇԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅ  
ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԱՎԱՏԱԼԻՔՆԵՐՈՒՄ ԸՍՏ ՀՈՎՀ.  
ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ**

**ՀԱՍՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

*Ինչպես ժամանակի շատ մտավորականների, Հ. Թումանյանի աշխատություններում ևս բացահայտ կամ քողարկված քննադական վերաբերմունք կա ժողովրդի ոչ միայն կենցաղային վատ պայմանների, այլև հետամնացության, անգրագիտության, դրանով իսկ պայմանավորված՝ սնահավատության, սնոտիապաշտության նկատմամբ, սակայն դա ամենևին չի խանգարել նյութը հաղորդել առանց խաթարելու՝ ընթերցողին հավատները չհեղձել իր հերոսների, անգամ հմայողների, գուշակների նկատմամբ, քանի որ դրան տիրապետում էր կատարելապես:*

*Հմայություն. Հայոց հոգևոր մշակույթին բնորոշ այս երևույթը ցայտուն ձևով դրսևորված է «Գելը» պատմվածքում, կորած անասունին գիշատիչներից պաշտպանելուն ուղղված արարողության (գելկապ) և աղոթքի («գելկապի աղոթք») համառոտ նկարագրությամբ: Հմայության այս ձևը տարածված է եղել Հայաստանի գրեթե բոլոր պատմադրագրական շրջաններում՝ կապված տնտեսության կարևոր ճյուղերից մեկի՝ անասնապահության հետ<sup>1</sup>: Գելկապի արարողությունը հիմնականում կատարվում էին տղամարդիկ<sup>2</sup>. Սյունիքում վերցնում էին թել կամ բարակ պարան, դրանով օղում երեք անգամ շրջան անում և արտասանում. «Գայլ եմ բռնում, գայլ եմ կապում»՝ կորած անասունին ասես վերցնելով շրջանի մեջ, ուր չէր կարող սողոսկել գայլը, այնուհետև պարանը երեք անգամ հանգուցում դանակի կամ դաշույնի սայրին: Նույն բանն անում էին նաև կացնով, այն խփում էին բրդի սանդերքի ատամների մեջ և այնպիսի տեղ պահում, որ ոչ ոք չկարողանար ձեռք տալ<sup>3</sup>: Լոռիում, ըստ Ե. Լալայանի վկայության՝ «Գել-կապ անողը հետևյալ աղոթքը եօթը անգամ շնչալով հանգուց է ձգում տրխատենի (տրեխի կապ) կամ գուլպի թելի վրա, որպեսզի ազա՛հ գայլի բերանը կապվի կամ կացինը դնում սանդերքի բերանի*

<sup>1</sup> Ա. Պետրոսյան, Գայլի պաշտամունքը հայ ժողովրդական հավատալիքներում, Բանբեր Երևանի համալսարանի, 2, Եր., 1989, էջ 76:

<sup>2</sup> Զանգեզուրի հայերի մեջ «տղամարդ աղոթողներ միայն պատահում էին հենց գայլի բերան կապող աղօթքներ ասողների մեջ».- Ստ. Լիսիցյան, Զանգեզուրի հայերը, Եր., 1969, էջ 309:

<sup>3</sup> Ստ. Լիսիցյան, Լեռնային Ղարաբաղի հայերը, Հայ ազգագրություն և բանահյուսություն (այսուհետև՝ ՀԱԲ), 12, Եր., 1981, էջ 62:

մեջ, որպեսզի գայլի բերանն էլ սուր դրվի և կամ մոխրով լի գդալը դնում է պատի մեջ, որպեսզի գայլի աչքերն էլ մոխիր լցվի և չտեսնե անասունին»:<sup>1</sup>

Գելկապի արարողութունն ուրույն տեղ ունեւ լոռեցիների սնտիւ-պաշտական հավատալիքների համակարգում և անպայման ուղեկցվում էր բանավոր խոսքով՝ «գելկապի աղոթքով»: Չնայած գելկապ անողները տղամարդիկ էին, արարողության հիմնական մասնակիցները, ըստ Հ. Թու-մանյանի, նաև մեծահասակ՝ «պառազ» կանայք են եղել, որոնք հմայողի հետ ցածրաձայն մրմնջացել են աղոթքը, այն հստակորեն ավարտելով ա-նեծքի բանաձևով՝ լսելի բոլոր մասնակիցներին և աներևույթ ուժերին.

«Ու մրմնջում էր «Գելկապի» աղոթքը...

Միջների պառավն անիծում էր.

- Վույ, անտեր մնաս դու, անտեր»:

Չնայած պատմվածքում գելկապի ողջ արարողակարգը չի նկարագրը-վում, սակայն միայն ժողովրդական անխառն աղոթքի՝ որպես հոգևոր մշակույթի բացառիկ ու հազվագյուտ նմուշի, գրանցումն արդեն մեծա-գույն ներդրում է հայ ազգագրության ու բանագիտության բնագավա-ռում: Այս ստեղծագործությամբ փրկվել է բանավոր խոսքի հոյակապ նմուշ<sup>2</sup>:

«Ալալու,

Գալալու,

Գելը կապեմ երկու բթով,

Երկու բթով, երկու մատով,

Ասովածածնա քաղցր կաթով,

Սուրբ Սարգսի ձիու ձարով,

Նահատակաց կարմիր քարով:

Գելի ճամփեն մոլոր անեմ,

Գելի ատամ խմոր անեմ,

Ոտները թույ,

Ականջը խուլ...»:

Հատկանշական է, որ, ի տարբերություն Ե. Լալայանի, Հ. Թումանյա-նը, լինելով բարբառի կրողն ու պահպանը, այն գրանցել է ճշգրտորեն՝ ոչ թե «գէլ-կապ», այլ «գելկապ», «գելկապի» աղոթք, որն առավել խոսուն է լոռեցիների համալիր մշակույթի բնութագրման տեսանկյունից:

<sup>1</sup> Ե. Լալայան, Բորչալուի գավառ, Ազգագրական հանդես (այսուհետև՝ ԱՀ), 10, Թիֆլիս, 1903, էջ 243:

<sup>2</sup> Կ. Մելիք-Փաշայան, Թումանյանը և ազգագրությունը, Պատմա-բանասիրական հանդես, 3, 1969, էջ 79:

«Խորենացու «Տենչայր Սաթենիկ» հատվածի առթիվ» (Հ. Թումանյան, Երկերի լիակատար ժողովածու, այսուհետև՝ ԵԼԺ, հ. 6, Եր., 1994, էջ 256) գիտական ուսումնասիրությունյան մեջ Հ. Թումանյանը չափազանց ուշադրավ տեղեկություններ է հաղորդում ժողովրդական պատկերացումներում կախարդական գորություն ունեցող խոտերի ու ծաղիկների մասին: Դրանք գործածվել են. «ինչպես գիրը, մազը, շորի կտորը, որ դնում են բարձի մեջ ու տակ, և այլ տեղերում, սիրտ կախարդելու, սիրահարեցնելու նպատակով»: Դյուլթելու այս հնարը հայերը լայնորեն կիրառում էին հեղինակի ապրած ժամանակներում ևս. «...սիրելի անձի սերը ստանալ ցանկացող կինը (երբեմն և տղամարդը) ծածուկ, առանց նրա գիտություն, դնում է նորա բարձի մեջ հոտավետ խոտեր և ծաղիկներ (կարծես առավելապես ուհան): Քանի մի ժամանակ անցնելուց հետո, այն խոտերը զաղտագողի բերում են, դնում են սիրվել ցանկացող անձի բարձերի մեջ, որով իբր թե բերվում են նորա բարձի տերի սերն ևս»: Հ. Թումանյանը դրանք համեմատում է արևելքի իշխանավորների գործածած գորավոր հմայիլների հետ, որոնք կարում էին հագուստին կամ դնում բարձի մեջ՝ հաջողություն և գորություն ակնկալիքով:

Գրի գորություն մասին ժողովրդական պատկերացումը հստակ ձևով տեսնում ենք «Մարոն» պոեմում.

«Թե գրբացի չար ջանքով,  
Գիր ու կապով, բժժանքով  
Մանուկ սիրտը կտրեցին...  
Էլ չիմացավ ոչ ոք պարզ,  
Միայն փոքրիկ նորահարս  
Մարոն ատեց իր մարդուն»:

Գիր անողներին և գրբացներին հաճախ դիմում էին սիրահարվածները՝ սիրեցյալների սիրտը գրավելու համար: Մեր ժամանակներում ևս մարդիկ հավատում են, որ գիրուկապով կարելի է հասնել ցանկալի նպատակին, փոխել կյանքի ընթացքը, մեկ-մեկու հանդեպ դրական կամ բացասական զգացմունքներ առաջացնել: Ազգագրական և բանահյուսական բազմաթիվ վկայություններ կան նաև այս երևույթի չար բնույթի վերաբերյալ, երբ դիմում էին նաև չար դիտավորություններ<sup>1</sup>: Ըստ Հ. Թումանյանի՝ նման դեպքերում գրբացին համարում էին «չար ջաղու», որպես վնասաբեր մո-

<sup>1</sup> 3. Харатян, Культурные мотивы семейных обычаев и обрядов у армян, Армянская этнография и фольклор (АЭФ), Ереван, 1989, էջ 53, Ю. Антонян, Магическое целительство и гадание в Армении (по материалам XX-го века). Диссертация на соискание ученой степени кандидата исторических наук, Ер., 2007, էջ 6, Գ. Հարությունյան, Դաշտային ազգագրական նյութեր (այսուհետև՝ ՊԱՆ):

գուլթյուն իրագործողի: Պոեմում հաստատվում է ժողովրդի մեջ տարածված այն կարծիքը, թե չար ուժերից խոցելի են հատկապես նորապսակները: «Չար ջաղու» արտահայտությունից կարելի է ենթադրել նաև, որ Լոուիում գիր էին անում մեծահասակ կանայք<sup>1</sup>: Մոգակրոնական ծեսեր իրականացնող «մասնագետների» ծիսարարների «բախտ բացող», «նայող», «կախարհ»<sup>2</sup> և այլ անունները Հ. Թումանյանը լրացնում է Լոուու խոսվածքին բնորոշ բառով՝ բացանող (ե՛լժ, հ. 9, եր., 1997, էջ 43):

Ըստ ազգագրական նյութերի՝ գիր անելու համար դիմում էին նաև մոլլաներին: Նորածինների կրկնվող մահացուլթյունների դեպքում մոլլան գիր էր անում՝ առաջարկելով նաև անունների մի քանի տարբերակ դեռ չծնված երեխայի համար:<sup>3</sup>

Գիրուկապի մասին ժողովրդական պատկերացումներն արտահայտված են «Հաղարան բլբուլի» բազմաթիվ տարբերակներում: Ժողովուրդը հավատում է, որ գիրը կարելի է բացել, իմանալ պատճառը և ելքը, ճարը.

«Թագավորը տղերանցը կանչեց, թե՛ մի գրբաց բերեք, գրին մտիկ անի, տեսնենք էս ի՞նչ մեղք ենք արել մենք, էս ի՞նչ էր, որ աստված մեզ նշանց տվեց: Գնացին ման եկան, մի հմուտ գրբաց գտան բերին: Գրբացը գիրը բաց արավ ու պատմեց թե՛ թագավորն ապրած կենա, պառավի անեծքից է չորացել ու կկանաչի միայն...»:

Հեքիաթի մեկ այլ տարբերակում գիրը բաց են անում իմաստունները, ինչից կարելի է եզրակացնել, որ գրբացները ևս իմաստունի համբավ են ունեցել: Ըստ ժողովրդական հավատալիքների՝ նրանք օժտված էին գերբնական շնորհներով, մեծ հարգանք էին վայելում, որն ինչ-որ չափով պարուրված էր քողարկված երկյուղածուլթյամբ: Պատահական չէ, որ գիր անողներին և գրբացներին ժողովուրդը նույնացնում է՝ վերագրելով միաժամանակ երկակի գործառույթ բարի և չար, քանզի գրբացներից ոմանք զբաղվում էին նաև «գրի» կամ «թուղթ ու գրի» պատրաստմամբ<sup>4</sup>:

Հայտնի է, որ գիր անում էին նաև հոգեկան խանգարումները բուժելու նպատակով: Լոուիում այսօր էլ հայտնի է Լեջան գյուղը, որտեղ մի քանի ընտանիքների ներկայացուցիչներ, սերնդեսերունդ փոխանցելով այդ շնորհը, շարունակում են կատարել հմայական այս գործողուլթյունները<sup>5</sup>, քանզի «մասնագետների» մեծ մասի շնորհը ժառանգական է, այն փո-

<sup>1</sup> Ջադու բառն առհասարակ գործածվել է բացասական կոնտեքստում, ընդ որում, ոչ թե իրական, այլ հեքիաթային կերպարների նկատմամբ, Ю. АНТОНЯН, նշվ. աշխ., էջ 69:

<sup>2</sup> Ю. АНТОНЯН, նշվ. աշխ., էջ 6:

<sup>3</sup> Գ. Գարուբյունյան, ԴԱՆ:

<sup>4</sup> Ю. АНТОНЯН, նշվ. աշխ., էջ 173:

<sup>5</sup> Գ. Գարուբյունյան, ԴԱՆ:

խանցվում է ընտանիքի հաջորդներին հայրական կամ մայրական գծով (հաճախ երկու սերունդը մեկ)<sup>1</sup>:

Գիր անել երևույթը խոսակցական լեզվում հայտնի է նաև ղալամ, թլիսամ և այլ ձևերով. «Աղջիկը սկսեց թլիսամ, գիր անել... մի թուղթ ծակեց, անցկացրեց մեջքը, բերեց ծծերից ներքև ամրացրեց: Չորս կողմին ամեն մի կողմը մի ղալամ, գիր գրեց (թլիսամ): Էդ թլիսամը(գիրը) դրան բարձրացրեց, հանեց երկնքի երեսը» (Հագարան բլբուլ):

Ակնհայտ է, որ ըստ ժողովրդական հավատալիքների, գրի ողջ ուժը նրա գաղտնիությունն է, այլապես այն կկորցնի գորությունը. «Պատմությունը ոչ ոք չպետք է իմանա, թե չէ թլիսամը կքանդվի, ազուավը նորից կին կդառնա»:

Ազգագրական տեսանկյունից խիստ ուշագրավ է այն, որ նկարագրվող հմայական արարողությունում գործածվել է նաև գայլի ճրագու, որն, ըստ ժողովրդական պատկերացումների, ունի կախարդական հատկություն.

«Կամ թե նրա հանդերձին  
Էն անհոգի չար ջաղուն  
Քսեց գիլի ճրագուն...»:

«...մինչև իսկ մեր օրերում այն օգտագործվում է ամուսնական անհավատարմություն, անօրինական կապերի մեջ գտնվող տղամարդուն կամ կնոջը «հետ բերելու» նպատակով... Այդ նպատակով գայլի յուղը գաղտնի քսում են նման տղամարդու կամ կնոջ հագուստներին, թաշկինակին ...առավելությունը տրվում է գայլի «աչքի եղին», քանի որ այն «լավ կկտրե»<sup>2</sup>:

Բնորոշ է, որ հստակորեն տարբերակվում են գիլի եղը և գիլի ճրագուն, որը կախարդելու ավելի գորավոր միջոց է համարվում: «Գիլի ճրագուն գործ ին ածում մարդ ու կնիկ իրարից բաժանելու համար»<sup>3</sup>:

Վերոհիշյալ հեքիաթում արտացոլված է նաև որոշ իրերի հմայական ուժով օժտված լինելու մասին ժողովրդական պատկերացումը. «Կրծքիս մի հուլունք դրեց, զգացի, որ մրափն ինձ կոխում է»:

Նշենք, որ բառային բանաձևերով ուղեկցվող մոգական հնարքներ են կիրառվել նաև սատանայից զգուշանալու նպատակով, ակնկալելով ձեռնարկված գործի հաջողությունը. «Վերջապես, սատանի ականջը խլանա ու ոտը կտորի, մի հողված դրկեցի «Գործին» (ԵԼԺ, հ. 10, եր., 1999, էջ 262):

<sup>1</sup> Ю. АНТОНЯН, Եզվ. աշխ., էջ 20:

<sup>2</sup> Ա. Պետրոսյան, Եզվ. աշխ., էջ 76:

<sup>3</sup> Վ. Ղազարյան, Լոռվա գավառի Դսեղ գյուղի ազգագրական նյութերը /ծեռագիր/, ՀԱԻ ԱԲԱ, ֆ. 89, քղթապանակ 4, էջ 450:

**Գուշակություն.** Հ. Թումանյանի ստեղծագործություններում բազմաթիվ ուշագրավ հիշատակություններ կան նաև հայոց մեջ դեռ հնուց լայն տարածում գտած գուշակությունների, մասնավորապես, «գարի գցելու» սովորությունների մասին<sup>1</sup>: Քանի որ գարի գցողները, ըստ ժողովրդական պատկերացումների, բարի գործ են արել, գուշակելու շնորհը սրբերից ստանալով (տվածուրիկ, աստվածային պարգև), այդ պատճառով էլ հարգանք են վայելել<sup>2</sup>: Նրանք սովորաբար իրենց ծառայությունների մասին վարձ չէին պահանջում, չնայած նրանց դիմողները տարբեր պատրվակներով, ըստ կարողությունների, նվերներ էին տալիս կամ օգնում լվացքի, բուրդ գզելու և թել մանելու ժամանակ<sup>3</sup>:

Գուշակում էին տարբեր բույսերի հատիկների՝ գարու, սիսեռի, լոբու և փոքրիկ քարերի միջոցով: Գարի գցողը, որ ժողովրդական խոսվածքում հայտնի էր նաև փալչի, փալբաց և այլ ձևերով, երկու ասիների մեջ դրանք խառնելուց հետո փռում էր և դրանց շարվածքից ու դիրքերից գուշակություն անում:

« -Աղջի՛, Մանիշակ, վատ բան ես տեսել,

Գարիս էլ ահա, էդպես դուրս եկավ.

Էս չարն, էս բարին... Սարոն է էս էլ...

Տես, ահա, Սարոն սև ձամփեն ընկավ...» (Անուշ):

Արարողություն համար վերցնում էին յոթ գուշակ գարու և ցորենի մեկ հատիկ: Գարիներից մեկի ծայրը կտրելով նշում էին որպես տան շեմ, մեկի ծայրը ցեխոտում, որպես կորստի նշան. մյուս հատիկները մարդ են համարել, իսկ ցորենը՝ բախտ ու հաջողություն: Գուշակը «հայր մեր» էր շնչում, հատիկները բուռը լցնում, մյուս ձեռքով ծածկում և երեք անգամ շարժելուց հետո, ըստ դրանց դիրքի՝ գուշակում: Եթե կորուստը ցորենի կամ շեմի մոտ լինի, կգտնվի, իսկ եթե գարու, ուրեմն գտնվելու տեղն անհայտ է<sup>4</sup>:

Հատիկներին երբեմն խառնել են հացի, աղի, փայլուն քարի կամ ապակու կտորներ: Գուշակել են նաև խաղաթղթերով, տերողորմեայով կամ

<sup>1</sup> Գուշակության մասին վկայում է դեռևս Փ. Բուզանդը, Մ. Մ., Ազգագրական նիւթեր Փաւստոս Բիւզանդացւոյ Յայոց պատմութեան մէջ, ԱՅ, 25, Թիֆլիս, 1913, էջ 9:

<sup>2</sup> Սուլդացի Յեղնարին տվել է Ս. Աստվածածինն ու Ս. Կարապետը «էրածով».- Ե. Լալայան, Ջավախք, Երկեր, հ. 1, Եր., 1983, էջ 243, 245, նույնի՝ Նոր-Բայազետի գաւառ, ԱՅ, 17, Թիֆլիս, 1908, էջ 111: Նման մասնագետները սոցիալական բարձր կարգավիճակ են ունեցել հատկապես մինչ-քրիստոնեական ժամանակաշրջանում, յՈ. ԱՆՏՈՆԻԱ, նշվ. աշխ., էջ 20, 69:

<sup>3</sup> Գ. Ա. Յակոբյան, Ներքին Բասենի ազգագրությունը և բանահյուսությունը, Եր., 1974, էջ 279:

<sup>4</sup> Ե. Լալայան, Ջավախք, էջ 245:

«բակլա բանալով» (Նոր Նախիջևան):<sup>1</sup> Գուշակության այդ ձևը տարածված էր Հայաստանի շատ գավառներում, այդ թվում նաև Լոռիում: Գարի գցողները հիմնականում կանայք էին, նրանց դիմում էին, օրինակ, վատ երազ տեսած ժամանակ.

«-Աղջի՛, Վարդիշաղ, թե հոգիդ սիրես,  
Մի գարիդ գցի՛ր, տես ի՞նչ է ասում.  
Աչքս խավարի, տեսիլ դառնամ ես,-  
Տեսիլք եմ տեսել գիշերս երազում» (Անուշ):

Մարդիկ գարի գցողներին դիմում էին կորուստը գտնելու և այլ՝ ամենատարբեր նպատակներով. «Թե հիվանդությունը որ սրբից է, թե հղի կինը տղա թե աղջիկ է ծնելու, թե կասկածելի անձնավորություններից որն է գողը, թե հարսնացու աղջիկներից որի հետ վերջիվերջո նշանդրվելու են և այլն»: Ջավախքում դիմում էին միայն կորուստը գտնելու նպատակով<sup>2</sup>:

Վատ բան գուշակելիս դիմում էին Աստծո ողորմածությանը՝ թեկուզ բառային բանաձևով, գարի գցողը ևս ընդունում էր Աստծո գոյությունը, հավատում էր նրա ողորմածությանը.

«Աստված խնայի ջահել-ջիվանին,  
Աստված խնայի իր անբախտ նանին...»(Անուշ):

Հ. Թումանյանը գործածում է գարի գցել արտահայտության ժողովրդական մեկ այլ հոմանիչ՝ ուամ, որն այլ աղբյուրներում չի հիշատակվում. «Էս մարդը ուամ է գցել ու գտել է, որ «Պ. Հովհաննես Թումանյանը բախտավոր աստղի տակ ծնված մարդ է» (Դժբախտ աստղի տակ ծնված մարդը):

Լոռիում գուշակել են նաև եղունգ նայելով, նման գուշակները հայտնի էին եղնգապան անվանումով (ԵԼԺ, հ. 9, էջ 89):

Ժողովուրդը գուշակում էր նաև աստղերի միջոցով, հավատում, որ ամեն մարդ ունի իր աստղը.

«Գուցե թե գիշերն անքուն աչքերով  
Ուզես իմանալ վիճակս աստղերով,  
Եվ հանկարծ մինը ծոր տա ու թռչի,  
Մութ հորիպոնի սահմանում կորչի...» (Մեհրի):

Լոռեցիները հավատում էին, որ «աստղի թռչելը մահուլ նշան է» (Մեհրի): Պատահական չէ, որ. «Երբ աստղը վեր ա ընկնում, էրկու հոգով

<sup>1</sup> Գ. Գևորգյան, Ղլար, ՅԱԲ, 10, Եր., 1980, էջ 64, Ե. Շահագիզ, Նոր Նախիջևանը և Ն. Նախիջևանցիք, ԱՅ, 9, Թիֆլիս, 1902, էջ 52, Վ. Գ. Ղազարյան, նշվ. աշխ., էջ 450:

<sup>2</sup> Ե. Լալայան, Բորչալուի գավառ, էջ 243, նույնի՝ Ջավախք, էջ 245 :

պետք ա վռագ իրար անուն տային, եթե մինչև վեր ընկնելը հասցնեին իրար անուն տալ և մի բան ուզել աստծուց, կկատարեր նրանց ուզածը»<sup>1</sup>:

Աստղ-բախտ կապի մասին ժողովրդական պատկերացումները Հ. Թումանյանի շնորհիվ ցայտուն ձևով դրսևորվում են «Անուշ» պոեմում.

«Աստղերն ահա ցոլուն-փայլուն,  
Բախտ են ծպտում դեպի ցած,  
Մենակ նրանց աստղը անհուն  
Երկնում կորավ դալկացած...»:

Հայոց մեջ սիրո ու երջանկության գուշակության ամենագեղեցիկ և տարածված ձևը Համբարձման տոնի ժամանակ կատարվող վիճակն էր, երբ բախտի ու կյանքի հարցերին այսօր էլ պատասխան են փնտրում բնութայան, ծաղիկների ու ջրի միջոցով, որի մասին, փայլուն, անզուգական նյութ է հաղորդում Հ. Թումանյանը: Համբարձման վիճակով, ինչպես նաև երագով ու կանխագագամբ, կենդանիների վարքագծով և այլ եղանակներով կատարվող գուշակության նմուշները, հմայության ձևերը, որոնցով հարուստ է Հ. Թումանյանի գրական ժառանգությունը, արժանի են առանձին ուսումնասիրության՝ նկատի ունենալով հոգվածի սեղմ շրջանակը:

<sup>1</sup> Վ. Ղազարյան, Գշվ. աշխ., էջ 450: